



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 14 » Տեպրեմբր 2019 թ.

№ 169-ձ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի N 275-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գերակա խնդիրների 57-րդ կետով և հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միօրինակությունն ու միասնականությունն ապահովելու և դրանց որակը բարձրացնելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը՝ համաձայն հավելված 1-ի:

2) հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետները և տրամադրման ձևերը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սահմանել, որ հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտի կիրառումը պարտադիր է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) հարկ վճարողներին ծառայություններ մատուցող բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների համար:

3. ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Ա.Մուրադյանին՝ սույն հրամանի ուժի մեջ մտնելու պահից երկօրյա ժամկետում ապահովել ՊԵԿ պաշտոնական կայքի «Հարկային տեղեկատվության» բաժնում նոր՝ «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» ենթաբաժնի ստեղծումը:

4. ՀՀ ՊԵԿ ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչության պետ Ա.Սահակյանին՝

սույն հրամանի ուժի մեջ մտնելու պահից եռօրյա ժամկետում ապահովել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտի, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների տեսակների, իրականացման ժամկետների, տրամադրման ձևերի և ծառայությունների մատուցման վայրերի հասցեների, հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, ծառայության մատուցման ժամերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությանը՝ «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ստանդարտ» ենթաբաժնում տեղադրելու նպատակով:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 3/14/2019 15:15:22 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ